

66. ԽԸՇԿՈԿԵ

Կէղնի, չէղնի պառավ մի կէղնի, ուրեն տղե մը։ Պառավ կէլնի ուր տղեն կարդա։ Կէրթա աղչիկ մի բերի ուր տղին։

Աղչիկն ա, կառնի հ'իգա ուր տուն։ Կմնա ամիս մը։ Աղչիկ կիգան տանին դարձ՝ պապու տուն։ Էրկու-իրեք շաբաթ կմնա ուր պապու տուն։

Աղչիկա պապն ու մամ կհարցուն աղչկա մոտեն, թե.—Աղչիկ, ի՞նչ բան է պատահի քըզի, էմլա խղճըցիր իս։ Չէ՞ղնի քու կիսուր քըզի կըչարչըրա, կծեծա։ Եթե քու կիսուր քըզի շատ կչարչրա, մենք չընք իտանք քըզի օր տանի էրթա։ Թե գինանք մայամ քու կիսուր քըզի վատ ա, քըզի ուրիշ տեղ կկարգիմ։

Աղչիկ կասա.—Չէ, իմ կիսուր ընձի շատ կան ա, ես իմ կիսրոչ թարկ ու իմ իրկան չըմ իտա, ես էլման կդառնամ, կէրթամ իմ էրկան վըրեն։

Կմնա, ամիս օր կթմի, կիսուր կիգա օր հարս տանի։

— Բարև։

— Ասսու բարին, խնամի։ .

Մեր կասա.— Աղչի, ելի խնամուն քուռսի բե, նստի։

Աղչիկ կէլնի քուռսի բերա, դըրա ուր կիսրոչ տակ օր նստի։

Հարսի պապն ու մամ կըսին.— Խնամի, բարով ու խերով էկար, գելո, տղեն սա՞ղ ա, իմա՞լ իս, իմա՞լ չիս։

Պառավ կասա.— Փառք ասսու, մենք սաղ սալամաթ ինք։ Մինակ, հ'ըսօր գիշեր, էլա թոնդիր վառեցի, օր գաթա էփենք, հաղ մը լա ես տեսա, օր մըր թավլի մեկ մաղ կոտրավ։ Հըրի մեք էլանք, ասինք՝ էդ ինչ բան էր, էրկու գոմեշ փիցան ի տակ։ Հավար էնեցինք, գյուղացիք էկան,

փորեցինք, զզրմրշտանք տրկեն հանեցինք։ Մեկ լե տեսանք հովիվ ընդեն վաղման էկավ, ըսեց՝ արեք, վեց հատ օշխար հ՚առչև չախվին ին։ Քու փեսեն առավ, էլավ չախուն, վազավ։ Ես լե վազա դրացու տուն, դեղթափ առա, էկա։ Հերի ես առա դեղթափ, հասա, տղեն չորս հատ մորթեց։ Գացի դետեն առա փշու մի ջուր, առա էկա, զդեղթափ տրորեցի մըջ ջրին, լըցի էրկու մաքու բերան, ըն էրկու մաքին սաղցան։ Նոր հ՚էլեր իմ, թազա թաքրար զթունդիր վառեր իմ։ Բերեր իմ չափ մի ալուր շաղեր իմ, էնիմ դաթա։ Թունդիր հ՚իջցեր իմ, էն օր զգաթեն կողենք։ Էլիր իմ, չարեք մա փարա տվեր իմ քու փեսին, գացեր, չարշու մոտեն առեր ա նուկի մը շաքար, էկեր ա։ Հըրի ես գաթեն կողեցի փրծա, թաքրար ելիր եմ, քիչ մը ալուր մաղեր եմ, քիչ մը խորիս խարկեցի, բերեցի քասե մը ջրի մեջ շաքար թոջեցի, տրորեր իմ շաքար, լցեր իմ վըր խորսին, էրկու լանգառի խորիս իմ զարկեր իմ, քիչ մը լե տվեցի քու փեսին, կերավ։ Մըր դրացու էրկու-իրեք մանդրիկ էկան հ՚ոնի, ամեկուն գունդ մի տվեցի, կերան։ Հետո էլեր իմ շալակ շալկեր իմ, էդա պառավ հալով, խեղճ-խեղճ էկեր իմ։ Էլ ընձի տեխ սախ չըմնաց, խնամի, հերի ընձի թալեցի Ֆեր տուն։ Նա տղեն էղներ, նա ուր անուն էղներ։ Իմ մամուց օր էղեր ենք, էդ ըմլա չարչարանք չըտեսեր ենք։ Մինակ էն օր, օր զիս առան էկան, օր ես հարս ենք, նըստուկ ենք վըր բալխըրին ես ու քու փեսի պապ, եր օր տարան զմի ժամ, կպսակեն, հ՚ընօր լա քանոնեքն էր, պարզկա էր, ցուրտ էր։ Հերի զմի բերեցին ի տուն, քու փեսի պապու օտներ ցուրտ տարավ, իմ լա ձեռներ ցուրտ տարավ։ Խնամի, խուրբան, էն ավուր չարչարանք ու էս ավուր մեկ էր։ Խնամի, գինա՞ս, ես էկեր իմ, իմ խարս կտանիմ։ Ես պառավ, չըմ կեռնամ զէդ օշխար ու տավար վերում, տնիմ։

Հարսի մամ կըսա.— Խնամի, չըմ իտամ իմ աղչիկ մըկա տանիս, իմ աղչիկ շատ խեղճ ա, թըխ մնա էրկու շաբաթ խորտնա, հետո արի, տար գնա։

Պառավ կըսա.— Չէ, ես էկեր իմ, պըտի տանիմ, օր չիտաս, էլ չըմ հ՚իգա, տանի։ Հարամ էղի քու աղչկան էրես վըր մըզի։

Խնամին ա, կէլնի աղչիկ կիտա, պառավ կառնի կիգա։ Պառավ հարս կբերա ի տուն։

Ամեն օր պառավ զհարս կծեծա, կքֆրա, հաց չիտա օր ուտա։

Տղեն ա, ամեն հ՚իրկուն կիգա, կհարցու.—Աղչի, ինչու՞ քու մազդեն կէնիս։ Հաց կա, խայլա մըզի կա, շընդո թան կա, ամենան բան կա, դու հ՚որի՞ քու նիաթ կէնիս։ Տողրին օր չըխոսաս, քու գլուխ կզարկեմ։

Աղչիկ կասա.— Քինե պահիմ, աստծուց ի՞նչպես պահիմ, օրական կտոր մա ցամաք հաց կիտա ու ամեն ատեն կծեծա ու զիս ի կքֆրա։

— Է,— կասա,— աղչիկ, իմա՞լ էնենք իմ մամուն։

Աղչիկ կասա.— Տղա, էլի գնա ուրիշ հեվո մը լա առ, արի, բալքի քու մամու հախեն հ՝իգա։

Տղեն ա, կասա մամուն.— Մամ, ընձի հաց էփա, ես կէրթամ խարիբութեն։

Տղի մամ կէլնի թունդիր կվառա, էմլա գաթա կողա, կէլնե էմլա էրկու ղուրուշ փարա կիտա տղին, կասա.—Գնա, շարշու մոտեն քիչ մա շաքար բեր, քըզի էրկու գունդ հալվա զարկեմ։

Տղեն կէրթա շարշու մոտեն շաքար կբերա, մամ ըտըրան հալվա կշիքա, գաթա կշիքա։

Տղեն է, լուսմութին ուր ձին կհանա դուռ, ուր խուրջի գաթեն կկապա վըր ձիու պառեկին, յոթ-ութ օսկի փարա լա կառնի ուր մոտ, բարև մնա կէղնի տնեն ու կէրթա։

Կէրթա գեղի մի կուշտ, կտեսնա աղչիկ մի հ՝ողի լվաց կէնա։ Կիշկա աղչկան քիթ ու մրռութ, տղեն հ՝ախու կկտրի։

Աղչիկն տղեն օր կտեսնա, ուր թումբան կհանա, կնստի տղի հ՝առեշ, շուր կթափա։

Տղեն կըսա.— Էդ աղչիկ օր իմ մամու հախեն չիգա, էլ մարդ մի չի գա։

Տղեն կհարցու աղչկաց.— Աղչի, քու պապու տուն ո՞ր տեխն ա։

Աղչիկ կըսա.— Դու իմ պապու տուն հ՝որի՞ կհարցուս։

Կասա.— Գործ ունիմ։

Կըսե.—Էնա բանձր խուբեն օր կէրևա, իմ պապու տունն ա։

Տղեն ա, կէրթա ըտըրա պապու տուն ու կիջնի։ Ձին կքաշա, տանի թավլեն կապա։

Ըտ աղչկա ախբըրկին տուն կէղնի։

Տղեն կասա.— Քուրիկ, քիչ մ՝ առվուտ բի, դիր իմ ձիուն։

Ըտ աղչկա ախբըրկին կասա.— Դու ի՞նչ մարդ իր օր առանց հարցընցելու, քու ձին տարար մըր թավլեն կապեցիր ու առվուտ, կասես, բիր դիր իմ ձիուն։

— Գնա, առվուտ բիր, փարով բիր։

Ախբըրկին կէրթա, գիրկ մը առվուտ կբերա։ Կդբա ձիու հ՝առեջ։ Առվըտի գին՝ չարեք մի փարա կառնի։

Հ՝իրկուն ախբրտանք գիքան, բարև կիտան, կասին.—Բարի իրիկուն։

Կըսա.— Ասսու բարին։

Կըսին.— Դու ի՞նչ մարդ իս։

Կըսա.— Ես ճամբորդ իմ։

Առավոտուն կէլնեն, հայն չէրթա, կմնա յոթն օր ըտընցա տուն։

Ըն մեկ օր, հ՝իրկուն օր ախբրտիք Լկան տուն, պղտիկ ախբեր կհարցու ըտ մարդուց, կըսա.—Ախբեր, դու էդա յոթն օր ի էկեր իս մըր տուն, ոչ դու քու սրտի խորհուրդ կըսիս, ոչ լե՝ մենք կհարցունք։

Կըսա.— Ախբեր, ձինե պահիմ, ասսուց ի՞նչ պահիմ, ես էկեր իմ մարդկության դեվի կէնեմ ձեզնե։

Կըսա.— Ախբեր, մըզի քուր չիկա, օր մենք կարգենք, մըր քուր կարգելու բան չէ։

Կըսա.— Էղնի, չէղնի, իմն օր կա, ձեր քուրն ա, չըկա՝ ձեր քուրն ա։

— Է, քու մեղք քու վիզն էղնի, դու օր կառնիս, մենք լե կիտանք։

Կէլնի տղեն, ութ օսկի փարա խալան կիտա։

Կէրթան զէրեց բերին, աղչիկ պսակեն վըր տղին։ Տղեն կէլնի, առնի զախչիկ, կիգա ուր տուն։

Մամ լա կասա.— Տղա, լաո, դու գացիր, զիտա գարշելի աղչիկ հ՝որի՞ առար, էկար։

— Դաղե.— կըսա,— վալլա, իմ սիրտ բռնեց, ես լե առա, էկա։

— Է.—կասա,—լաո, դու օր հավնար, առար էկար, ես լա կհավնեմ, քու ծոց կպառկի, իմ ծոց չըպառկի։ Անշախ ըդի է մըր տան լայեղին, օր մըր տան բան վերցու, դըրա։

Կմնա, էրկու-իրեք օր ըդ մեշ կընցնի։

Պառավ ամեն օր զադ կէփա, կտանի տնա գեշ հարսի հ՝առեճ, խորոտիկ հարսին էմլա ցամաք հաց կտանի։

Պառավն օր կէլնի դուրս, գեշ հարս կէրթա խորոտիկ հարսին կըսա.— Քըզի հաց տվե՞ց։

Կըսա.— Հա, վալլա, ցամաք հաց տվեց։

Կըսա.— Օր հըմլա ա, ընձի զադ ա բերեր ա, արի էրթանք, իմ հ՝առեջ մացեր ա, քզի կի։

Եբ օր խորոտիկ հարս կէրթա, ուրեն հաց կուտա, գեշ հարս կասա.— Դու զքու շոֆեն քաշա, ես ըտրա հախեն գիկամ։

Իրկուն տղեն գիկա տուն, կիշքա օր ուր հ՝առջին կնիկ ուրեն ռանկ բաց ա։

— Աստված խերն էնա,— կըսա,— կէղնի օր իմ մամ քըզի ըսօր լավ էղե։

Կըսա.— Վալա, ըսօր կուշտ մի մըզի զադ կերեր ինք։

Հ՝առջի շաբթուն պառավ ամեն օր զադ կէփե, կերցու ուր գեշ հարսին։ Գեշ հարսի հ՝առջևն ինչ օր կէվելնա, էդ խորոտիկ հարս կուտա։

Շաբաթ օր կանցնի, էրկրսին լա ցամաք հաց կիտա։

Գեշ հարս կըսա խորոտիկ հարսին.—Ըտըմլա չէղնի։ Պառավ պըտի ցամաք հացով զմըզի տպանա, արի մեք պառվուն չարե մը էնենք։

Կէլնին ուրանց իրկան կըսին.—Թե քու մամ ցամաք հացով ղմզի կսպանա, քու մամուն ըսա, թը մըզի լավ տիրաք։

Տղեն մամուն կըսա.—Ըդ հարսներուն լավ նայա, ամեն բանից իւ տուն լցուկ ա, ես կաշխատիմ՝ իմ կընկտոց համար, որ խըլխի ձեռ չիշկին։

Պառավ կըսա.— Ես ի՞մալ էնիմ, ուտող ուրացող ին։ Ամեն օր ես ըդընցա անուշ զադ կէփիմ։ Կէլնին քըզի կըսին, թե քու մամ մըզի ցամաք հաց կուտա։

Տղեն չըխոսա։

Գիկա, ուր կնկտոց կըսա.—Իմ մամ կըսա՝ ես ամեն օր զադ կէփիմ, կէլնեն քըզի կըսին, թե ցամաք հաց կիտա մըզի։

Օր մա դըրկեցի տղեն կկարգին։ Գիկան օր հարսներ առնին, էրթան հինա դրունք։ Պառավ կըսա.— Ես կէրթամ, հարսներ չըմ թորկիմ էրթան։

Տղեն կըսա.— Նանե, դու պառավ իս, հարսնիք ի՞նչ կէնես, ըտոնք ջհել ին, թող էրթան քիչ մի սեյր էնին, հ՝իդան։

Պառավ կասա.— Իդա ատ, իդա իման, ես կէրթամ հարսնիք. օր չըթորկիս էրթամ՝ քու տուն չըմ կանի։

Տղեն կըսա.—Նանե, օր հըմալ ա՝ քու միտք կարգըվել ա, արի, ղքի կարգիմ։

Մամ կըսա.— Չէ, ես պառավ իմ, էրթամ քիչ մի սեյր էնիմ, բալքի ջհելնամ։

Տղեն կըսա.— Դու, քու աստված, գնա։

Պառավն ա, հ՝ընօր կէրթա հարսնիք, գեշ հարս կէլնի, եղ կէրթա բըղկեն հանա, բերա խորիս էփին, ուտին։

Պառավ լուսմըթին գիկա, կէրթա եղի բըղիկ կիշքա, օր եղ հանած ա բըղկեն։ Կէրթա ալրրի բըղիկ կիշքա, օր ալուր լա հանած են։ Տղին կգանգրտի։

Տղեն կըսա.— Նանե, ուրանց իշտեն քաշած ա, հանած էփած ին ուրանց, կերած ին, ես ի՞նչ էնիմ։

Պառավն ա, ըդ հաղ, թը ուրիշ անգամ մեկ հաց կիտեր, ըդ հաղ ամեկին դանում մեկ-մեկ կտոր ցամաք հաց կիտա։

Կըմնա, օր մ՝լա հարսնիք կէղնի, հարսներ կասին.—Պառավ, զմի արի հ՝ըսօր առ, գնա հարսնիք։

Պառավ կըսա.— Ծամկտրուկներ, ձըզի ի՞նչ հարսնիք պիտի, հարսնիք ընձի պիտի։

Էմալ օր կասա, հարսներ կէնին, չէնին, պառավ զհարսներ չըտանի։

Պառավ կէլնի հ՝իրկուն, կառնի պառկ մա փետի փոշի, պառկ մա ալուր, փոշին ու ալուր կխառնա իրար, կբերա շեմկլի մոտեն կցփնա,

մինչև էրթա եղի բրղկի մոտ, ամեն տեղ կցփնա, օր ըռեշք էրևա ու պառավ կէրթա հարսնիք։ Հարսներ չըտանա հարսնիք։

Հ՚իրկուն օր պառավ կէրթա հարսնիք, հարսներ կէլնին ըզդուռ կփակին, կէրթան թավլից էշ կբերին, կհեծնին հ՚առջի հարս՝ Խըշկոկեն ղէշ։

Փարեն լն կըսա.—Խըշկոկե, դու իշով գնա, եղ բրղկեն հանա, բեր, ես լա կէրթամ փեսա կբերեմ սրախեն, մըզի էփինք հալվա, ուտինք։

Խըշկոկեն իշով կէրթա, եղի բրղկեն ուխլով եղ կհանա բերա, կըսա.—Փարե, եղ բերեցի։

Կըսա.— Խըշկոկե, էմլա իշով գնա, փեսկեն ալուր լա հանա, բեր։ Գնա քասով բըլղուր լա բեր։ Արի քըզի ըդ հաղ դու զադ էփա, ես կրակ վառիմ։

Խըշկոկեն կէրթա ալուր, բըլղուր կբերա։ Կիշնի իշուց, էշ կտանի թավլեն կապա, կիգա դաղ կէփա, Փարեն կրակ կվառա։

Կէփին փլավ, կուտին, ուրանց հալվա լա կշիքին։ Ըդ հաղ Փարեն կրսա.—Խըշկոկե, մըզի փլավ կուշտ կերանք, հալվա լա մըզի շիքեր ինք, կէրթանք մըզի քնինք։ Աշկա, ես ինչ օր քըզի կըսիմ ու դու չէնիս, վայ քու հոկուն ըդ հաղ։

Խըշկոկեն կըսա.— Փարե՛, ինչ օր դու ասիս, ես քու խոսք կատարիմ։

Փարեն կըսա.— Խըշկոկե, ըդա հալվի իրեք գունդ դու քո գոտին գիր, իրեք լե՝ ես իմ գոտին կդնեմ։ Պառավն օր գիշեր էկավ, դրռան վրեն բոռաց, մեք կէլնինք զդուռ կրանանք պառվուն։ Պառավ օր էկավ ներս, ըս հաղ պառվուն կասինք. պառավ դոր մերն ա, դու սեյրն էնա, մեք կխաղանք։ Պառավն օր նստավ, ես կբռնիմ քու ձեռք. կէլնենք խաղանք։ Ես քըզի կասիմ. «Խըշկոկե, Խըշկոկե, պըշտա նա քավի գըլոլոկեն»*։ Ըդ հաղ օր կրսիմ, դու մեկ-մեկ գունդ հալվեն քու գոտուց թալիս։ Էնա, լանգառին հալվեն լա պահյա, մըր իրիկ օր էկավ, կիտանք ուրեն ուտա։ Դե, ճրաք ընցու, էրթանք պառկենք, մըզի քընինք։

Խըշկոկեն կէրթա, ճրաք կընցու, կուգա՝ պառկին ուրանց քընին։

Աղոթըրնին օր կէղնի, հարսինք կֆըբղի, պառավ կիգա հարսընտնեն։

Կբոռա.— Խըշկոկե, Խըշկոկե, դուռ բաց։

Խըշկոկեն կէրթա Փարուց կհարցու, կըսա.—Պառավն էկավ, էրթա՞մ դուռ բանամ։

Կըսա.—Գնա բաց, թը պառավն հ՚իգա։

Խըշկոկեն կիգա դուռ կբանա։ Պառավն կիգա ներս։

---

* Գոտիկցդ գունդեր չիյնան (Թ. Բ.)։

Խըշկոկեն զՀրաք կկրպու։ Խըշկոկեն օր զՀրաք կկրպու, պառավ կիշքա օր ըռեՀք փլուկ ա։

Պառավ կըսա.— Ֆել՝ ֆելա Փարե ա, ռեշ՝ ռեշ ա, քըրե ա, պատըն, պատըն ա Խըշկոկե ա*։

Փարեն ըդ հաղ կէլնի կըսա.— Պառավ, դու կուշտ քոշարի խաղցեր իս հարսընքտում, ըդ հաղ դորն մերն ա, դու սեյր արա, մեք խաղանք։

Պառավ կըսա.— Դը էլեք խաղցեք, ես սեյր կէնիմ։

Փարեն ու Խըշկոկեն կէլնին կխաղան։ Կրռնին հ՝իրարու ձեռ ու կԲըռնին խաղան։

Փարեն կըսա.—Խըշկոկե, Խըշկոկե, պըշտա նա քավի գըլոլոկե**։

Խըշկոկեն գունդ մի հալվա կԲալա դոտուց։

Իրեք հաղ հըմալ կասին ու կխաղան։ Խըշկոկեն իրեք գունդ լա գոտուց կԲալա։

Պառավ կէլնի, կառնի ըղփետ, օր հարսներ ծեծա։ Փարեն կբռնա զպառավ, դնա գետին, կըսա.— Խըշկոկե, արի։

Կբռնին զպառավ, հըմալ կծեծին օր պառվու շանդակ կսևնա, կէղնի գործելի։ Պառվու ուշ կընցնի, դոշկըներ կբերին, քաշին պառվու վրեն ու կհեռենան։

Տղեն ակըրտգահ Մըշու գիկա։ Կհարցու, կըսա.—Իմ մամ հ՝ու՞ր ա գացի։

Կըսին.— Քու մամ գացեր է էսօր հարսնիք, խաղցի, նեղեցիր, էկեր ա պառկեր։

Կմնա հերի կեսօրին, տղեն կէրԲա կըսա.— Դադե, դադե,—ձեն չիտա։

Հաղ մը լա կբոռա, կըսա.—Դադե, դադե։ ·

Մամ ձեն կիտա, կըսա.—Իմ լեշ բաց, իշքա։

Տղեն օր կբանա մամու շանդակ, իշքա օր սևցի, էղե գործելի։

Կըսա.— Ըդ ի՞նչ էղեր ա։

Կըսա.— Վալլա, քու կընկտիքն ա ծեծած՝ էնած ա ըդ հըմալ։

Կըսա.— Ըդ իմա՞լ էղավ օր զքի ծեծեցին։

Կըսա.—Ֆել՝ ֆելա Փարե բու, ռեշ՝ ռեշա քարե բու, պատըն՝ պատըն ա Խըշկոկե բու։

Հ՝եբ օր ես հարսնքտընեն էկա, տեսա օր ըտոնք բռնած հ՝իրարու ձեռք, կխաղան։ Մեկ լե տեսա՝ առան փետեր, հ՝ընկան իմ ջանդկի վրեն, տվեցին զիս ի հ՝առջև փետին, ծեծեցին, զիս սևցուցին, զիս իդա հալ հ՝ընկցուցին։

---

* Խորամանկությունը Փարեինն է, հետքը՝ իշունը, էփելը Խըշկոկեին է (Թ. Բ.)։

** Թարգմ. նախորդ էջում (Ծ. Կ.)։

Տղեն կրսա.— Անչախ քու հալն էդ էղնի, էդի խրշկոկե ատն ա, կէլնի։ Էդ է, օր դու լավ էղներ, ինչու՞ պրտի ես էրթենք ղՓարեն բերենք, օր քու հալ իդա էղներ։

Կրսա.—Լաո, իդա լա իմ հանցանքն ա, իդա լա իմ տեղն ա։ Քաշիմ օր իմ հոգին հ'էլնի։

Ըդ հաղ պառավ կէլնի, կիշքա հարսներուն ձեռ։ Օրական կտոր մի հաց կուտան, պառավ կուտա։ Ինչ օր պառավ էներ ա հարսներու գլուխ, հարսներ լե կէնին պառվու գլուխ։

Փարեն կրսա.— Խրշկոկե, դու տանտրկնութեն էնա, ես լա բերվորութեն էնեմ։

Պառավ մնաց խեղճ։